

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՕՋՆԵՑՈՒՆ ՎԵՐԱԳՐՎԱԾ ՄԻ ԳՐՈՒԹՅԱՆ
ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Ե. Ա. ԳԱԼՍՅԱՆ

1911 թ. վաստակաշատ հայագետ Ն. Ակինյանը հրատարակեց ձեռագրական վեց փոքրիկ հատվածներ՝ դրանք վերագրելով VIII դարի նշանավոր եկեղեցական քաղաքական գործիչ Հովհաննես կաթողիկոս Օձնեցուն¹։ Ն. Ակինյանի կարծիքով սա Օձնեցու «Բանին մարմնաւորութեան» մասին այն երկն էր, որը հիշատակում էր Խոսրովիկ թարգմանիչը²։ Հատվածները քաղված էին Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 648 ձեռագրից, որի գրության ժամանակն ու տեղը վիճելի են, իսկ գրիչը, ծաղկողն ու կաղմողը՝ անհայտ։ Գրչագիրը, վեց հատվածներից բացի, բովանդակում է նաև Աթանաս Ալեքսանդրացու և Իրի-գոր Նազիանզացու (Աստվածաբան) հեղինակությունները, ինչպես նաև Օձնեցու վավերական ճանաչված «Յաղագս առաւօտեան պաշտաման»³ և «Յաղագս երեկորին պաշտաման»⁴ գրությունները։

Նորագյուտ հատվածներն ունեին խստիվ գծագրված քաղկեդոնական ուղղվածություն և, որ կարևորն է, անհայտ էր նրանց հեղինակը։ Համոզված լինելով Օձնեցու երկաբնակության մեջ, Ակինյանն առանց վերապահության հիշյալ հատակտոյները վերագրեց նրան։ Ակինյանը գրում է, թե «Ը գարուն գրված են անոնք և արդյունք են Հովհաննես կաթ. Օձնեցվո մատանց»⁵, «գրվածքին թե՛ ըմբռնումը, թե՛ ոճը, թե՛ լեզուն և թե՛ վերջապես եղրակացությունները կը մատնանշեն այն գրիչը, որ հեղինակած է «Ընդդէմ երեւութականաց» հանրածանոթ ճառը. նույն իսկ չեն պակսիր բառական նույնություններ երկուքին մեջ. օրինակներով խոսիլ ավելորդ է»⁶։

Որքան մեղ հայտնի է, այս եղրակացությունները շահնդիպեցին որևէ առարկության։ Ավելին, դրանք քաղաքացիություն ստացան և վավերական իրողություն համարվեց Օձնեցու երկաբնակ լինելու պարագան⁷։

1 Ն ե ր ս ե ս Ա կ ի ն յ ա ն, Հովհաննես կաթողիկոս Օձնեցվո նորագյուտ գրվածք մը բանին մարմնավորության վրա, «Հուշարձան», գրական ժողովածու առթիվ 100-ամյա հոբելենի հաստատման Մխիթարյան միաբանության ի Վիեննա (1811—1911), և 25-ամյա տարեշրջանի «Հանդես ամսօրյա» ուսումնաթերթի (1887—1911), Վիեննա, 1911, էջ 336—344։

2 Գ ա ր Ե Գ ի ն Հ ո վ ս ե փ յ ա ն, Խոսրովիկ թարգմանիչ (Ը դար), պատմական-մատենագրական ուսումնասիրություն, Վաղարշապատ, 1899 (1903), բնագիր, էջ 11—12։

3 «Հովհաննու Իմաստասիրի Աձնեցույ Մատենագրութիւնք (Մատենագրութիւնք նախ-ձեաց)», ի Վենետիկ, յամի 1833, էջ 16 և հտ.։

4 Նույն տեղում, էջ 21 և հտ.։

5 Տե՛ս «Հուշարձան», էջ 336։

6 Տե՛ս նույն տեղում, էջ 338։

7 Հմմտ., օրինակ, Ե. Գ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն, Աստվածաբանական տեսություն մը Օձնեցվո ընդդեմ երևութականաց ճառին, «Բաղմավեպ», 1922, մայիս, № 5, էջ 133, նաև՝ Վ ա ի Բ ր յ ու ո վ, Տարեգրություն հայ ժողովրդյան պատմական ճակատագրին, թարգմանեց ռուս բնագրեն Հ. Մարգարյան, Վենետիկ, 1931, էջ 163, թարգմանչի ծանոթությունը։

Սակայն, ինչպես հայտնի է, Հովհաննես Օձնեցին հայադավան եկեղեցու ամենաջերմ պաշտպաններից մեկն էր։ Զխոսելով քննարկվող հատվածների լեզվի ու ոճի մասին, որոնք, հակառակ ն. Ակինյանի հավաստիացմանը, շոշափման եզրեր չունեն Օձնեցու վավերական երկերի լեզվաոճական առանձնահատկությունների հետ, նրանց գրության ողին բացարձակապես անհամատեղելի է, ինչպես այդ պիտի փորձենք հավաստել, Օձնեցու գաղափարախոսությանը, դավանական ու քաղաքական համոզմունքներին։

Ավելի քան մեկ հաղարամյակ չի դադարել Օձնեցու դավանանքը վիճարկող գրական հակամարտը՝ տեղի տալով այլադան որակումների և ծայրաբեկեռներ ներկայացնող գնահատականների։ Եթե Օձնեցին մեծարվել է «սքանչելագործ»⁸, «երկրորդ Ոսկեբերան»⁹, «երկրորդ Լուսավորիչ» և «կրկին Կիրեղ»¹⁰ հորջորջումներով, ապա, դրան հակառակ, բնութագրվել է նաև ամենանվաստացուցիչ որակումներով, համարվել է «սուտ և խաբէբայ վարդապետ», «գայլ հափշտակող», «օձաբարու վիշապ»¹¹, «յիմար և յերձուածող»¹², նաև անբարոյական¹³ և հերետիկոս¹⁴։

Արդ, ո՞րն է իրականությունը։

Քրիստոնեությունը Հայաստանում պետականորեն հաստատվելուց ի վեր հայ եկեղեցին մշտապես հարկադրված էր զորավիգ լինել երկրի քաղաքական ինքնուրույնության պահպանման ջանքերին։ Պարսկա-բյուղանդական, ապա և արաբա-բյուղանդական աշխարհավեր հակամարտությունների ընթացքում հայ ժողովուրդն ակնհայտորեն ըմբռնեց, որ ըստ էության տարբերություն չկա օտարերկրյա նվաճողների քրիստոնյա, զրադաշտական կամ մահմեդական լինելու մեջ։ Նրանց բոլորի դեմ պայքարելն էլ մի նպատակ էր հետապնդում՝ Հայաստանի քաղաքական ինքնուրույնության վերահաստատումը, բայց կասկածից դուրս է, որ այդ նպատակին հասնելու միջոցները տարբեր պիտի լինեին։ Քրիստոնյա Բյուղանդիայի դեմ պայքարն ուներ և չէր կարող չունենալ որոշ առանձնահատկություններ։ Հակաբյուղանդական պայքարը նաև գաղափարական պայքար էր։ Հայ եկեղեցու միաբնակության և բյուղանդական եկեղեցու երկաբնակության միջև մղվող պայքարը, Քրիստոսի անձի և բնության շուրջ ոլորվող աստվածաբանական ողջ տեսությունը մեղանում ստանում էր գերադանցապես գործնական բովանդակություն, վերածվում էր գաղափարական դեմքի և ի սպաս դրվում երկրի քաղաքական կարիքներին։

Օձնեցին (և ոչ միայն Օձնեցին) սեփական կամքով ու ցանկությամբ չէ, որ ընտրում էր դավանական իր դիրքորոշումը։ Այդ կախված էր քաղաքական հանգամանքներից, երկրի ներքին ու միջազգային իրադրությունից, ընդդիմամարտ կողմերի ուժերի հարաբերակցությունից։ VIII դարի սկզբին, երբ Հա-

⁸ «Ժամանակագրութիւն տեառն Միխայէլի Ասորւոց պատրիարքի», Երուսաղեմ, 1871, էջ 339։

⁹ Տե՛ս «Արարատ», 1888, № Ժ, հոկտեմբեր, էջ 583։

¹⁰ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 2368, էջ 508ա։

¹¹ Կ. Գալանոս, Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցոյն ընդ մեծի սուրբ եկեղեցոյն Հռովմայ, հատ. I, Romae, 1690, էջ 202։

¹² Ա. Բաբիկյանց, Համառոտ յայտ յանդիմանութիւն երկուց ճշմարտութեանց ընդդէմ երկուց մոլար դրութեանց, ի Վիեննա, 1817, էջ 17։

¹³ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 10236, էջ 138ա/բ։

¹⁴ А. Аннинский, История армянской церкви, Кишинев, 1900, էջ 17։

յաստանը վերջնականապես նվաճված էր Արաբական խալիֆայության կողմից, հայ եկեղեցու առաջնորդն ի վիճակի՞ էր, անգամ ցանկության դեպքում, քաղկեդոնականությանը հարելու, առանց իր և երկրի վրա հրավիրելու օտարերկրյա բռնակալության զայրույթը։ Ամենևին։ Սակայն ո՞վ էր երաշխավորելու, որ Բյուզանդիան խալիֆայությունից երբեք չի խլի Հայաստանը։ Հետևաբար, ըստ ամենայնի, ճիշտ չէր լինի վերջնականապես թշնամանալ քրիստոնյա կայսրության հետ։ Պետք էր խուսաճանալ՝ իսլամին հակադրելով քրիստոնեությունը, իսկ քաղկեդոնականությանը՝ միաբնակությունը։ այս՝ էր միակ ուղին, որ հմտությամբ իրականացնում էր Օձնեցի կաթողիկոսը։

Օձնեցու դավանական դիրքորոշումը բացահայտելու տեսակետից առաջնակարգ կարևորություն են ներկայացնում նրա իսկ հեղինակությունները, մանավանդ «Ընդդէմ երևութականաց» ճառը, որ առիթ է տվել թեր ու դեմ կարծիքներին։ Առաջին անգամ Մ. Չամչյանն էր, որ հանգամանորեն լրացրեց նրա քննությամբ և փորձեց հավաստել հիշյալ երկի «ոչ հակաքաղկեդոնական» բնույթը¹⁵։ Բազմավաստակ պատմաբանի մատնանշած շավղով քալեցին նաև Մ. Ավգերյանը¹⁶, Ս. Սոմալյանը¹⁷, Ալ. Պալճյանը¹⁸, Վ. Ըստկարյանը¹⁹ և ուրիշներ²⁰։ Մ. Չամչյանի և Մ. Ավգերյանի ելրակացությունները լուրջ առարկությունների հանդիպեցին Ա. Բաբիկյանի կողմից։ Վերջինս համոզիչ կերպով ցույց տվեց նրանց փաստարկումների բռնազբոսիկ բնույթը, հավաստեց «Ընդդէմ երևութականացի» կատարյալ միաբնակ բովանդակությունն ու ուղղվածությունը²¹։ Օձնեցուն երկաբնակ հռչակելը անհնարին է թեկուզ այն պատճառով, որ նրա աստվածաբանական բանաձևումները համահնչյուն են հայոց եկեղեցու դավանանքին հավատարիմ բոլոր գործիչների արտահայտություններին և նրա հետ միասին հարկ կլինի քաղկեդոնական դարձնել միջնադարի հայ մտավորականների ճնշող մեծամասնությանը։ Օձնեցու մյուս հեղինակությունները ևս հաստատում են հեղինակի հակաքաղկեդոնիկ ընթացքն ու վարդապետությունը։ Այդուամենայնիվ, իր ընդհանուր ծրագրից ելնելով, ակնառու այս գործիչն աշխատում էր խուսափել դավանական հարցերի սուրանկյուն դրվածքից, այլադավան եկեղեցիների հետ ավելորդ վիճաբանությունից, միաժամանակ, իր ողջ գործունեությամբ ամրապնդում էր հայ եկեղեցու դիրքերը, ձգտում հասնել դավանական-քաղաքական ինքնուրույնության։ Այդօրինակ գործունեության արգասիքն էին, օրինակ և՛ Դվինի ու Մանազկերտի

¹⁵ Մ. Չամչյանց, Պատմություն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784, հատ. Բ, Վենետիկ, 1785, էջ 573 և հտ.։

¹⁶ Տե՛ս «Յովհաննու Իմաստասիրի Օձնեցւոյ ճառ ընդդէմ երևութականաց», հանդերձ յառաջաբան և հետևորդ ծանօթութեամբք Մկրտիչ վարդապետի Աւգերեան, Վենետիկ, 1807։

¹⁷ „Quadro della storia letteraria di Armenia“, estesa da M. P. Sukias Somal. Venezia, 1829, էջ 16։

¹⁸ Ալ. Պալճյան, Աթոռ սրբոյն Պետրոսի առաքելապետի, Վիեննա, 1853, էջ 233 և հտ.։ Ն ու յ ն ի՞ Պատմություն կաթողիկե վարդապետության ի Հայս, Վիեննա, 1878, էջ 24—25։

¹⁹ Վ ա ռ դ ա ն Ը ս տ կ ա ռ յ ա ն, Եկեղեցական պատմություն հանդերձ աղգալին եկեղեցական պատմությամբ, Վիեննա, 1872, էջ 194։

²⁰ Տե՛ս, օրինակ, «Բաղմավեպ», հատ. ՍԴ, հուլիս, 1896, հավելված։

²¹ Տե՛ս Ա. Բաբիկյանց, նշվ. աշխ., էջ 26—27, 31, 39, 96 և հտ.։

ժողովները, և՛ առաքելությունը արաբ խալիֆի մոտ, «Կանոնագրքի», ամենայն հավանականությամբ նաև «Գիրք թղթոցի» կազմությունը:

Արդ, պատմական սկզբնաղբյուրների տվյալների համաձայն գործունեության այսպիսի կողմերով բնութագրվող Օձնեցին կարող էր, արդյոք, հեղինակած լինել Քաղկեդոնի դավանանքին հավատարիմ այն հատվածները, որ փորձում էր նրան վերագրել Ն. Ակինյանը: Բնավ երբեք:

Հատվածների հեղինակը համոզված քաղկեդոնական էր: Քրիստոսի անձին և լինելիությանը նվիրված հատվածում նա գրում էր. «Եւ ունի զինքնութիւն երկուց բնութեանցն, որպէս եւ յերկուս բնութիւնս ճանաչի, եւ վասն այսորիկ մի եւ նոյն անձն անեղ գոլով աստուածութեամբ եւ եղական մարդկութեամբ, տեսանելի եւ անտեսանելի, որով բռնադատիմք կա՛մ բաժանել զմի Քրիստոս՝ երկուս անձինս ասել, կա՛մ ուրանալ զբաժանումն բնութեանցըն, եւ փոփոխման եւ խառնակութեան լեալ ընդունակ, զոր մեզ քա՛ւ լիցի ասել»²²:

Առաջին հատվածում անհայտ հեղինակն առատորեն վկայակոչում էր սուրբ հայրերին, հատկապես Ղևոնդիոս (Լևոնտիոս) Բյուզանդացուն (485—543): Վերջինս հայտնի էր որպես քրիստոնեական աստվածաբանությունիւ առաջին անգամ արիստոտելյան փիլիսոփայության հիմնավորելու²³, Կյուրեղ Ալեքսանդրացու վարդապետությունը երկու բնության դավանության հետ հաշտեցնելու իր ջանքերով, Քաղկեդոնի դավանական շրջադարձը տեսականորեն հիմնավորելու մտայնությամբ²⁴: Այս պատճառով էլ նրա ո՛չ անունը, ո՛չ էլ մանավանդ հեղինակությունները չէին կարող աղբյուր դառնալ հայադավան որևէ աստվածաբանի, այն էլ Հովհ. Օձնեցու համար²⁵: Այս հանգամանքը, ինչպես նաև գրությունների լեզվա-ոճական առանձնահատկությունները մեզ հուշեցին, որ այդ հատվածները թարգմանված են այլ լեզվից:

Նկատենք, որ կրոնա-դավանաբանական բնույթի այս նորագյուտ հատվածներում անհայտ հեղինակը շոշափում էր գրեթե նույն խնդիրները, որոնց անդրադառնում էր և Օձնեցին: Ո՞վ կարող էր լինել նա: Հարկավ, Օձնեցուն ժամանակակից կամ ժամանակամերձ որևէ բյուզանդացի հեղինակ: Մեր ուշադրությունն առաջին հերթին բեռավեց Հովհան Դամասկացու վրա (675—749—753-ի միջև): Այդպես մտածելու համար բավականաչափ հիմքեր ունենք:

Դամասկացին VIII դարի Բյուզանդիայի ոչ անհայտ դեմքերից մեկն էր: Նա Օձնեցուն շատ էր հիշեցնում մասնավորաբար հակապավլիկյան իր գաղափարախոսությամբ ու գործունեությամբ, իրևութականության և պատկերամարտության դեմ մղած իր պայքարով: Ինչպես և Օձնեցին, Հովհան Դամասկացին

²² Տե՛ս «Շուշարձան», Լժ 343:

²³ Հմմտ. „Μεγάλη ἐλληνο-εὐρωπαϊκή ἐγκυκλοπαίδεια“, τόμος 15, Լժ 912:

²⁴ Տե՛ս հատկապես նրա «Ընդդեմ միաբնակաց» („Contra monophysitas“) երկը. „Patrologiae cursus completus“, series graeca, tomus 86, pars posterior, accurante J.-P. Migne, սյուն. 1769—1902:

²⁵ Ն. Ակինյանը փորձում է այդ հավանական դարձնել հետևյալ նկատառումով. «Որչափ կ'երևա Հայք է դարուն թարգմանած էին հայերեն Բյուզանդական մատենագրության մեջ համբավվոր Ղևոնդիոս Բյուզանդացվո սվասն Աղանդոց» («De sectis») կոչված գրությունը» (տե՛ս «Շուշարձան», Լժ 340), մի լավատեսություն, որ հաղիվ թե հիմնավոր նկատվի:

անարգանքի սյունին էր դամում պավլիկյան աղանդավորներին²⁶։ Եռանդուն էր, մանավանդ, պատկերամարտության դեմ մղած նրա պայքարը։ Լուարկելով պատկերամարտներին, Դամասկացին գրում է. «Երկիր պազանեմք ոչ նիւթոյն, այլ խորհրդոյ կենդանագրելոյն, որպէս և ոչ խաչի և աւետարանին նիւթոյն երկիր պազանեմք, այլ սորին սակի և խորհրդոյ նոցա»²⁷։ Ըիշտ նույն կերպ է տրամաբանում և Օձնեցին, երբ քննադատության թիրախ դարձնելով պավլիկյանների պատկերամարտությունը, եղբակացնում է, թե պատկերներին պաշտելով «ոչ յերկուանամ՝ նմին ինքեան բազմեցելոյն ի նոսա Քրիստոսի զերկրպագութիւնն մատուցանել, ոչ հաւելով յերեւելին առաւել՝ քան թէ զանտեսանելին ի նմա գանձեալ ընդ միտ ածելով»²⁸։

Ընդհանրություններ նկատելի են նաև «նորագյուտ» հատվածների և Օձնեցու «Ընդդէմ երեւութականաց» ճառի միջև²⁹։ Եվ այս է պատճառը, որ Ն. Ակինյանը նրանց մեջ նշմարել է նույնիսկ «բառական նույնություններ»։ Սակայն ավելի ուշադիր քննությունը պարզում է, որ այդ նույնությունները աղբյուր չունեն համեմատվող երկերի բովանդակային կողմի և գաղափարական ուղղվածության հետ։ Այնինչ, հրատարակված հատվածները համահնչյուն են Դամասկացու աշխատություններին թե՛ լեզվա-ոճական, և թե՛ դավանական ու գաղափարական տեսակետից։

Այնուամենայնիվ, Դամասկացուն չէր կարելի վերագրել խնդրո առարկա հատվածները, նախքան դրանք նրա գործերում հայտնաբերելը։

Հովհան Դամասկացու գլխավոր աշխատությունը «Աղբիւր գիտութեան» (Πηγή γνωσης) խորագրով հայտնի եռապատումն է։ Երկի առաջին մասը կոչվում է «Ներածութիւն իմաստասիրութեան»³⁰ (Κεφαλαία εισαγωγικά)։ Երկրորդ մասը կրում է. «Ընդդէմ հերձուածոց» (Περί αἵρεσεων) վերնագիրը, իսկ երրորդ՝ ընդարձակ մասը խորագրված է «Աւանդութիւն ուղղափառ հաւատոյ» ('Εχούσας ἀρχαίης τῆς ὀρθόδοξου πίστεως, «Բացատրութիւն ճշմարտութեան ուղղափառ հավատոյ»)։ «Ներածության» շարադրանքը կատարված է Արիստոտելի, Պորփյուրի և Ամմոնիոսի հետևողությամբ։ Հետևելով Ղևոնդիոս Բյուզանդացուն, Դամասկացին փորձում էր աստվածաբանական իր դրույթներն հիմնավորել Արիստոտելի տրամաբանությամբ։

Եթե Հովհան Դամասկացին էր Ն. Ակինյանի լույս աշխարհ հանած վեց հատվածների հեղինակը, ապա դրանք կարելի էր որոնել եռապատումի երրորդ մասում։ Արդարև, դրանք միևնույն վերնագրերով առկա են Դամասկացու երկերի հունարեն բնագրում։ Ահա հատվածների հայերեն և հունարեն վերտառությունները՝ Ն. Ակինյանի հրատարակությանը համապատասխանող հաջորդականությամբ.

²⁶ Հմմտ. J.-P. Migne, t. 94. սյուն. 1506 և հտ.։

²⁷ Նշողցի անվ. Մատենադարան, ձեռ. № 116, էջ 219բ։ Հմմտ. նաև «Полное собрание творений св. Иоанна Дамаскина», т. I, СПб, 1913, էջ 351։

²⁸ «Տոմարնո իմաստասիրի Աձնեցու Մատենագրութիւնք», էջ 42։

²⁹ Հմմտ. նույն տեղում, էջ 49, 53 և «Հուշարձան», էջ 343, 344։

³⁰ Այս երկը ձեռագրերում պատահում է «Յաղագս գոյի, էութեան», «Յաղագս գոյի, էութեան և պատահման», «Յաղագս էութեան և պատահման» խորագրերով. հմմտ. Հ. Ս. Անասյան, Հայկական մատենագիտություն, հատ. Բ, Երևան, 1976, սյուն. 1048։

1. «Վասն տեսակի եւ վասն անհատիցն զոլ տեսանելի բնութիւն եւ վասն բաժանման Բանի եւ միաւորութեան եւ վասն մարմնաւորութեան Տեառն եւ թէ որպէս ասելի է մի բնութիւն մարմնացելոյ Բանին Աստուծոյ».

2. «Դիմադրութիւն ասողացն թէ ոչ գոյ բնութիւն առանց անձին».

3. «Վասն ապականութեան եւ անապականութեան».

4. «Առ որս հարցանեն թէ անձն Քրիստոսի անկողնի վրէժն եղական».

5. «Եթէ յորմէ՞ եւ ե՞րբ կոչեցաւ Քրիստոս».

6. «Վասն ընդ աջմէ հօր նստելոյն»³¹.

1. «Περὶ τῆς ἐν εἰσοεὶ καὶ ἐν ἔξοδῳ θεωρουμένης φύσεως, καὶ διαφύσεως. ἐνώσεως τε καὶ διαχωσεως καὶ πῶς ἐκλήπτεον; „Τὴν μίαν φύσιν τοῦ Θεοῦ Λογοῦ σεσαρκωµενήν».

2. «Πρὸς το, εἰ[σὺν] ἔστι φύσις ἀνυπόστατος, ἀκίνητος».

3. «Περὶ φθόρας καὶ διαφθορας».

4. «Πρὸς τοὺς ἐρωτῶντας, εἰ ἡπόστασις τοῦ χριστοῦ καί ποτε ἔστιν ἡ ἀκτιστος».

5. «Περὶ τοῦ ποτε ἐκλήθη χριστός».

6. «Περὶ τῆς ἐκ δεξιῶν τοῦ Πατρὸς καθέδρας»³².

Հատվածները համապատասխանաբար կազմում են հունարեն բնագրի 45 (20), 43 (8), 62 (17), 57 (5), 68 (6) և 65 (2)-րդ գլուխները:

Արդ, ե՞րբ և ո՞ւմ կողմից էին հայերեն թարգմանվել Հովհան Դամասկացու աշխատությունները:

«Աղբյուր դիտություն» երկի առաջին մասը «ի յունարէն գրոյ» հայերեն էր թարգմանվել տակավին X դարում՝ Բագարատ Մամիկոնյանի կողմից³³: Անտեղյակ այս թարգմանությունը, XIII դարում (մոտ 1240-ին) Սիմոն Գառնեցին (Պղնձահանեցին) ձեռնարկում է եռասյատումի ամբողջական թարգմանությունը՝ կատարելով այն վրացերենից³⁴: Այս վերջին թարգմանություն միջոցով է, որ մեզ է հասել «Ավանդություն ուղղափառ հավատո» երկը՝ որպես յուանձին գլուխներ ունենալով նաև այն վեց հատվածները, որոնք ավելի քան վեց տասնամյակ է վերադրվում են Հովհաննես կաթողիկոս Օձնեցուն:

«Ավանդություն ուղղափառ հավատոյն» պահպանված է տարբեր դարերի մի շարք ձեռագրերում: Այն առկա է Մաշտոցի անվան Մատենադարանի № 63 (XV—XVI դդ.), 101 (XVIII դար), 102 (XVII դար), 103 (XVIII դար),

31 «Հուշարձան», էջ 340—342, 342, 342—343, 343, 343—344, 344: Հմմտ. նաև «Ցուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարյան մատենադարանին ի վիճենա», հատ. Բ, կազմեց Համազասպ Ոսկյան, Վիեննա, 1963, էջ 133—134:

32 J.-P. Migne, t. 94. col. 1021—1028, 1016—1017, 1097—1100, 1109—1112, 1112—1113, 1104: Երկը, որ բաղկացած է 100 սրակից, հունարենում և հայերենում որևէ այլ բաժանման չի ենթարկվում, այնինչ, լատիներենում բաժանվում է 4 գրքի, որոնցից յուրաքանչյուրն էլ առանձին գլուխների (հմմտ. Գ. Ջարպահանյան, Մատենադարան հայկական թարգմանությունաց նախնյաց. Վենետիկ, 1889, էջ 576): «Ավանդության» ռուսերեն թարգմանության մեջ, լատիներենի հետևությամբ, մեր վեց հատվածները կազմում են երրորդ գրքի XI, IX, XXVIII և չորրորդ գրքի V, VI ու II գլուխները (հմմտ. «Полное собрание творений св. Иоанна Дамаскина», էջ 257—259, 255, 293—294, 298—299, 299—300, 295—296):

33 «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Հակոբյանց», հատ. Գ, կազմեց Նորայր Եսս. Պողարյան, Երուսաղեմ, 1968, էջ 413 և 460: Հմմտ. «Quadro delle opere di vari autori anticamente tradotte in Armeno, Venezia, 1825, էջ 37:

34 Նանրամասն՝ Ն. Ա. Կ. ի ն յ ա ն, Սիմոն Պղնձահանեցի և իր թարգմանությունները վրացերենի, Վիեննա, 1951, էջ 65 և հտ. ի դեպ, Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 648 ձեռագիրը, դատելով գրչությունից, չի կարող XIV դարից ավելի վաղ ընդօրինակված լինել: Հմմտ. «Հուշարձան», էջ 336, նաև Հ. Ոսկյան, Ցուցակ, էջ 133:

116 (XIV—XV դդ.), 3156 (XVIII դար), 4027* (XVIII դար), 5789 (XVII դար), 5859 (XVII դար), 7894*³⁵ (XIX դար)³⁶, ինչպես նաև Երուսաղեմի մատենադարանի № 768, 1035 և 1297³⁷, Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 648, 763³⁸, Թավրիզի № 51³⁹, Սևանի վանքի № 58⁴⁰, Զմմառի վանքի մատենադարանի № 520, 621, 626⁴¹, Ղալաթիո Ազգային մատենադարանի № 56, 78, 79⁴² և Արմաշի վանքի № 194⁴³ ձեռագրերում:

Գրչագրերում երկն ունի «Սրբոյ հաւրն մերոյ Յովհաննու քահանայ կրօնաւորի Դամասկացոյ Աւանդութիւն ուղղափառ հաւատոյ» խորագիրը, նրանց մեծ մասում՝ հետևյալ բովանդակությամբ հիշատակարանը. «Կատար վաստակոց Յովհաննու Դամասկացոյ կոչեցելոյն Մանսուր համառօտ ասացեալ նորոյ շնորհաց աւանդութիւնք և թարգմանեցեալ Սիմէոնէ ի վրաց լեզուէ ի հայ բառ»: Հատվածները, միևնույն վերնագրերով, կազմում են ձեռագրերի ՄԲ, ՄԴ, ՀԱ, ՀԴ, ՀԷ և ՀԸ պրակները, որոնք բառացիորեն համապատասխանում են Ն. Ակինյանի հրատարակությանը⁴⁴:

Այս մասին որևէ կասկած վերջնականապես բացառելու նպատակով անհրաժեշտ ենք համարում հրատարակված գրությունների տարբեր մասերից վերցրած միայն երկու հատված համեմատել հունարեն բնագրի և հնագույն գրչությամբ երկու հայերեն ձեռագրերի հետ⁴⁵:

J.-P. Migne, t. 94, col. 1021—1024

„ II ψύσις η ψιλη θεωρία κατανοείται, καθ' αυτήν γαρ ουχ υφίσταται η κοινως εν πνευματι ομοραιοεισιν υποστὰσσει ταύτας συναπτουσα και λεγεται εν τω εϊθε! θεωρουμένη ψύσις“.

³⁵ Աստղանիշ կրող երկու ձեռագրերն էլ պակասավոր են, մեզ հետաքրքրող գլուխները բացակայում են այնտեղ:

³⁶ Ավելորդ ենք համարում նշանակել բոլոր ձեռագրերի համապատասխան էջերը: Կբավարավենք միայն երեք օրինակով (հատվածների հերթականությունը ըստ Ն. Ակինյանի հրատարակության). ձեռ. № 116 1) պր. ՄԴ, էջ 155ա—157ա, 2) պր. ՄԲ, էջ 151բ—152բ, 3) պր. ՀԱ, էջ 189ա—190ա, 4) պր. ՀԷ, էջ 194ա, 5) պր. ՀԸ, էջ 194բ—195ա, 6) պր. ՀԴ, էջ 191ա, ձեռ. № 63, համապատասխանաբար՝ 71ա—բ, 69ա—բ, 85բ, 87բ, 87բ—88ա, 86ա, ձեռ. № 5789, 123ա—124ա, 120բ—121ա, 143բ—144ա, 146բ, 146բ—147ա, 144բ:

³⁷ «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Հակոբյանց», հատ. Գ, էջ 212—213, հատ. Դ, էջ 50 և 521:

³⁸ Հ. Ոսկյան, Ցուցակ, էջ 133, 308:

³⁹ «Ցուցակ հայերեն ձեռագրաց Թավրիզի», կազմեց Հրաչյա Աճառյան, Վիեննա, 1910, էջ 117:

⁴⁰ Ն. Մ ա ո, Ցուցակ համառոտ ձեռագրաց վանուց Սևանա, Մոսկվա, 1892, էջ 25:

⁴¹ «Ցուցակ հայերեն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին», հատ. Բ, Անտոնյան հավաքածո, կազմեցին Ն. Ակինյան և Հ. Ոսկյան, Վիեննա, 1971, էջ 123—124, 226—227, 230—231:

⁴² Բ ա բ բ ն ա թ ո ո ա կ ի ց կ ա թ ո ղ ի կ ո ս, Ցուցակ ձեռագրաց Ղալաթիո Ազգային մատենադարանի Հայոց, Անթիլիաս, 1961, էջ 362 և հտ., 523—526:

⁴³ Հ. Թ ո փ ճ յ ա ն, Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, Վենետիկ, 1962, էջ 361—362:

⁴⁴ Հատվածներից երրորդը, ի դեպ, աննշանորեն տարբեր թարգմանությամբ մեջ է բերում և Կ. Գալանոսը որպես Հովհան Դամասկացու հեղինակություն, տե՛ս «Միաբանություն», հատ. Ա, էջ 90—91:

⁴⁵ Զգուշանում ենք որևէ սրբագրությունից, նշանակում ենք սոսկ կետագրությունը:

Հուլարձան, էջ 340	Ձև. № 116, էջ 155ա	Ձև. № 63, էջ 71ա
«Բնութիւն կամ աղաւտ ինչ տեսութեամբ իմանի՝ դի ինքն անձամբ իւրով (իւրով) ոչ ենթակայի, կամ ի հասարակաց հա- մատեսակ անձինս մերձե- ցեալ զնա՝ եւ կոչի ի սե- ռի անդ տեսանելի բնու- թիւն»...	«Բնութիւն կամ աղաւտ ինչ տեսութեամբ իմանի, դի ինքն անձամբ իւրով ոչ ենթակայի, կամ ի հա- սարակաց համասեռ եւ հա- մատեսակ անձինս մեր- ձեցեալ(ւ) զնա եւ կոչի ան- ձին անդ տեսանելի բնու- թիւն»...	«Բնութիւն կամ աղաւտ ինչ տեսութեամբ իմանի, դի ինքն անձամբ իւրով ենթակայի, կամ ի հասա- րակաց համասեռ եւ համա- տեսակ անձինս մերձեցեալ զնայ եւ կոչի անձն անտե- սանելի բնութիւն»...

J.-P. Migne, t. 94, col. 1097—1100

Το της φθέρης ὄνομα οὗτο σημαίνει. Σημαίνει γάρ τα ἀνθρώπινα ταῦτα παθῆναι, πεῖναν, οἰψαν, χόνον, τὴν τῶν ἄλλων διατροφήν, θανάτον, ἤτοι χωρισμὸν ψυχῆς ἐκ τοῦ σώματος, καὶ τὰ τοιαῦτα.

Հուլարձան, էջ 342—343	Ձև. № 116, էջ 189ա	Ձև. № 63, էջ 85բ
«Անուն ապականութեան երկուս տեսակս գրողմէ. եւ կոչի պակասումն ապա- կանութիւն՝ իբր զքաղց, զծարաւ, աշխատութիւն, ցաւք, բեւեռումն եւ մահ, որ է մեկնումն անձին ի մարմնոյ, եւ այլ այսպիսի- սիքս»:	«Անուն ապականութեան երկուս տեսակս գրողմէ. եւ կոչի պակասումն ապակա- նութիւն, իբր զքաղց, զծա- րաւ, աշխատութիւն, ցաւք, բեւեռ(ւ)ումն եւ մահ, որ է մեկնումն անձին ի մար- մնո եւ այլ այսպիսիքս»:	«Անուն ապականութեան բս տեսակս գրողմէ. եւ կո- չի պակասումն ապակա- նութիւն, իբր զքաղց, զծա- րաւ, աշխատութիւն, ցաւք, բեւեռումն եւ մահ, որ է մեկնումն անձին ի մարմ- նոյ եւ այլ այսպիսիքս»:

Այս ամենից հետո, թվում է, թե այլևս որևէ կասկած չի կարող լինել մեզ հետաքրքրող գրվածքի հեղինակային պատկանելության մասին⁴⁶:

Թե ե՞րբ և ինչպե՞ս են սույն հատվածները, այն էլ առանց հեղինակի հիշատակության, տեղ գտել Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 648 ձեռագրում, այդ այնքան էլ էական չէ: Մանավանդ որ, նմանադեպ շփոթու-
թյունները ձեռագրերում ո՛չ եղակի են և ո՛չ էլ աբսուրդ: Սակայն թվում է, պատահական չէ նաև, որ հատվածները հյուրընկալվել են հիմնականում Աթա-
նաս Աղեքսանդրացու ճառերն ու թղթերն ամփոփող ժողովածուի մեջ. վերջի-
նիս գրչին է պատկանում «Դաւանութիւն Ս. Աթանասի» կոչվող գրությունը,
որը ձեռագրերում հանդես է գալիս նաև «Դաւանութիւն ուղղափառ հաւատոյ
ասացեալ մեծին Աթանասի գերազանց վարդապետի Աղեքսանդրու» վեր-
նագրով⁴⁷:

⁴⁶ Ընդարձակ ձևով առաջին անգամ Հովհան Դամասկացուն և նրա երկերի հայերեն թարգ-
մանուիչյուններին անդրադարձել է ինքը՝ Ն. Ակինյանը: Նա լավատեղյակ է Դամասկացու եր-
կերի բնագրերին, վերը մեր հիշատակած ձեռագրերի մեծ մասին, ընդ որում 1925-ին Նրևանում
առի՛ք է ունեցել տեսնելու և ցուցակադրելու: Մատենադարանի №№ 63, 101, 102, 103, 116 եւ
Գրական թանգարանի № 835 (այժմ պահվում է Մատենադարանում, 8444 թվահամարի տակ
և բովանդակում է սոսկ «Յաղագս դոյի, էութեան եւ պատահման» երկը, էջ 317ա—347բ) ձե-
ռագրերը. տե՛ս Ն. Ակինյան, Սիմեոն Պղնձահանեցի, էջ 57—101: Տարօրինակ է, որ այս
ամենից հետո հմուտ հայագետը դարձյալ չի նկատել սևիական վրիպումը:

⁴⁷ ԵՍ. Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք և ընդդիմասացութիւնք», Վե-
նետիկ, 1899, էջ 473 և հտ.:

К ВОПРОСУ ОБ АВТОРЕ ОДНОГО ТРУДА, ПРИПИСЫВАЕМОГО
ОВАНУ ОДЗНЕЦИ

Е. А. ГАЛСТЯН

(Резюме)

Для характеристики церковно-политической деятельности, оценки философских воззрений, а также религиозных убеждений выдающегося армянского мыслителя VIII в. Ована Одзнеци важное значение имеет выяснение авторской принадлежности приписываемых ему трудов. В 1911 г. видный арменовед Н. Акинян опубликовал шесть отрывков из рукописи № 648 Хранилища древнеармянских рукописей венских Мхитаристов, приписав их Овану Одзнеци. Однако, как показывает изучение этих отрывков, по своим стилистическим особенностям и воззрениям они не находят соответствий в подлинных произведениях Одзнеци и не могут принадлежать ему. С помощью сравнительного анализа в статье доказывается, что рассматриваемые отрывки, написанные в духе халкидонизма, представляют собой отдельные главы труда известного византийского богослова и церковного деятеля Иоанна Дамаскина «Точное изложение православной веры», переведенного на армянский язык в XIII в.